5.5. Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պատասխանատվություն չեն կրում մինչև սույն Պայմանագրի կնքումը Հաշվետիրոջ արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը վարող, արժեթղթերի պահառությունն իրականացնող անձանց գործողությունների համար:

5.6. Եթե Կենտրոնական դեպոզիտարիան չի կատարել կամ ոչ պատշաճ կերպով է կատարել սույն Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները, ապա Կենտրոնական դեպոզիտարիան Հաշվետիրոջ առջև պատասխանատվություն է կրում նրան պատճառված վնասների համար միայն այն դեպքում, եթե դրանք առաջացել են Կենտրոնական դեպոզիտարիայի մեղքով:

5.7. Սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

## 6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, գործում է անորոշ ժամկետով և կարող է լուծվել միայն ՀՀ օրենսդրությամբ և այլ կիրառելի իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

**7. Տեղեկատվության գաղտնիությունը**

7.1. Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը պարտավոր են պահպանել սույն Պայմանագրի համաձայն պահպանվող տեղեկատվության գաղտնիությունը և իրավունք ունեն այն տրամադրել երրորդ անձանց միայն ՀՀ օրենսդրությամբ, այլ կիրառելի իրավական ակտերով և/կամ սույն Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:
7.2. Կենտրոնական դեպոզիտարիան և Հաշվի օպերատորը, յուրաքանչյուրն իր կողմից կատարված գործողությունների չափով, պատասխանատվություն են կրում սույն գլխով սահմանված տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործման կամ բացահայտման համար:

**8. Ծանուցագրեր**

8.1. Կողմերի միջև ծանուցումները և հաղորդագրությունները, բացառությամբ սույն Պայմանագրով և/կամ Իրավական ակտերով նախատեսված դեպքերի, պետք է ձևակերպված լինեն գրավոր, ստորագրված իրավասու անձանց կողմից և կնքված իրավաբանական անձի կնիքով (առկայության դեպքում), հանձնված անձնապես (ուղարկողի օրինակի վրա ստացողի կողմից ստանալու վերաբերյալ նշում կատարելով), ուղարկված էլեկտրոնային իրավասու հասցեից, կամ ուղարկված «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքին համապատասխան:

**9. Այլ դրույթներ**

9.1. Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառելի է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
9.2. Սույն Պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի համաձայնությամբ՝ գրավոր ձևով, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրով և/կամ Իրավական ակտերով:
9.3. Սույն Պայմանագրի Կողմն իրավունք ունի այլ անձի փոխանցել սույն Պայմանագրով իր իրավունքներն ու պարտավորությունները միայն մյուս Կողմերի գրավոր համաձայնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ և այլ կիրառելի իրավական ակտերով այլ բան սահմանված չէ:
9.4. Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը, ինչպես նաև Կողմերի միջև սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով, ՀՀ իրավասու դատարանների կողմից:
9.5. Սույն Պայմանագիրը կնքվում է հայերեն՝ երկու հավասարազոր օրինակից, մեկ օրինակ՝ Հաշվի օպերատորին, մյուսը՝ Հաշվետիրոջը:
9.6. Պայմանագրի Կողմերի լիազորված անձանց տվյալները կցված են սույն Պայմանագրին և հանդիսանում են դրա անբաժանելի մասը:
9.7. Հաշվետերը հավաստում է, որ սույն Պայմանագիրը կնքելուց առաջ ծանոթացել է Կենտրոնական դեպոզիտարիայի կանոններին, Հաշվի օպերատորի կանոններին և անհրաժեշտ այլ իրավական ակտերին, չունի առարկություններ դրանց վերաբերյալ:

**Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները**

| **Հաշվետեր** | **Կենտրոնական դեպոզիտարիա** |
|---|---|
| ********** | **«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ** |
| Անձնագիր՝______________ | |

Տրված՝ _______________
Ծնված՝ ______________
ՀԾՀ՝________________
Հասցե՝______________
Հեռ.՝______________
Էլ. փոստի հասցե՝ ___________

✓ _________________________
Ստորագրություն

Գրանցված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, գրանցման համար՝ 1
ՀՎՀՀ՝ 02555643
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ
Հեռ.՝ +374 60 615555
Էլ. փոստի հասցե՝ info@amx.am
Կայք՝ www.cda.am

**Հաշվի օպերատոր**

**«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ**

Պետական գրանցման համար՝ 13
ՀՎՀՀ՝ 02657619
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10
Հեռ.՝ +374 11 800 810
Էլ. փոստի հասցե՝ backoffice@cubeinvest.am
Կայք՝ www.cubeinvest.am

Գլխավոր տնօրեն՝ ***********

✓_________________________
Ստորագրություն

**Արտարժույթի դիլերային-բրոքերային ծառայություններ**

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ իրականացնում է արտարժույթի սփոթ և ֆորվարդ առուվաճառքի գործառնություններ ՀՀ շուկայում տարածված բոլոր արժութային զույգերով և շուկայում առկա առավել մրցունակ փոխարժեքներով:

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման պայմանագրի օրինակելի ձև

.

**Արտարժույթի առք ու վաճառքի**
**գործառնությունների իրականացման պայմանագիր թիվ** ***

ք. Երևան «***» ******* 20**թ.

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ-ն, այսուհետ՝ Ընկերություն, ի դեմս գլխավոր տնօրեն ***********, ով գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «*********» ***, այսուհետ՝ Հաճախորդ, ի դեմս ***********, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետ միասին անվանվելով «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր) հետևյալի մասին.

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Սույն Պայմանագիրը սահմանում է Պայմանագրով սահմանված կարգով փոխարկման գործառնությունների իրականացման ընդհանուր պայմանները:

**ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1. Կողմերը երաշխավորում են, որ ունեն փոխարկման իրականացման բոլոր իրավունքները:
2.2. Պայմանագրի պայմանները կրում են խիստ գաղտնի բնույթ և Կողմերի կողմից հրապարակման ենթակա չեն, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:
2.3. Կողմերը հայտարարում են, որ սույն Պայմանագիրը ստորագրող իրենց ներկայացուցիչներն իրավասու են իրականացնել վերոնշյալ գործողությունները:
2.4. Գործարքներից բխող Կողմերին վերապահված իրավունքներն իրացվում են և պարտավորությունները կատարվում են ՀՀ օրենսդրության, ինչպես նաև նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

**ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

3.1 ***Բազիսային ակտիվ***՝ փոխարկման գործառնության էական պայմաններից կախված՝ Առուվաճառքի արժույթն է:
3.2 ***Արժույթ***՝ որևէ պետության կամ պետությունների խմբի տարածքում գործող պաշտոնական դրամական միավորն է՝ որպես վճարման օրինական միջոց:
3.3 ***Փոխարկման ամսաթվեր***՝ Կողմերի միջև համաձայնեցված աշխատանքային օրեր, որոնց ընթացքում կատարվում են վճարումներ համաձայն կնքված գործարքի պայմանների, որոնք, այլ բան հատկանշված չլինելու պարագայում, համապատասխանում են վճարումը ստացող Կողմի հաշվին դրամական միջոցների մուտքագրման ամսաթվին:
3.4 ***Հաշվարկների գծով կետանցի առաջացման ամսաթիվ***՝ արժույթի փոխարկման ամսաթվին հաջորդող օրացուցային օրը, որի ընթացքում որևէ Կողմի վճարումները չեն կատարվել կամ կատարվել են մասնակի:

3.5 ***Գործառնության (գործարքի) իրականացման (կնքման) ամսաթիվ (Գործառնության/գործարքի ամսաթիվ)*** որևէ Կողմի դիմումի հիման վրա գործարքի էական և այլ պայմանների համաձայնեցումը Կողմերի միջև:
3.6 ***Կոնտր արժույթ*** Առուվաճառքի արժույթի դիմաց վաճառվող կամ գնվող արժույթ:
3.7 ***Գնանշում*** մեկ արժույթը այլ արժույթի փոխարկման արժեքների, համամասնությունների սահմանումն է՝ հաշվի առնելով առկա տնտեսական պայմանները, գործող օրենսդրական նորմերը և ձևավորված պրակտիկան:
3.8 ***Աշխատանքային օր (բանկային օր)*** օրացուցային օր, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանգստյան և տոն օրերի, ինչպես նաև համապատասխան նորմատիվ ակտերով աշխատանքային օրեր տեղափոխված հանգստյան օրերի:
3.9 ***Առուվաճառքի արժույթ*** այն արժույթը, որի գնման կամ վաճառքի համար Հաճախորդը դիմել է գնանշման համար:
3.10 ***Արժույթի սփոթ փոխարժեք*** գործարքի կնքման պահին բորսաներում սահմանված և Կողմերի միջև համաձայնեցված՝ որպես գործարքի համար ընդունելի սփոթ փոխարժեք:
3.11 ***Սփոթ գործարք*** արժույթների միջև առքի/վաճառքի գործարք, այսուհետ՝ Գործարք, այնպիսի փոխարժեքով, որը համաձայնեցվել է Կողմերի միջև Գործարքի ամսաթվին:

3.12 ***Պայմանագրային գումար կամ առուվաճառքի գումար*** սույն Պայմանագրի Հավելված 1-ում նշված Հաճախորդի կողմից ձեռքբերվող արժույթի անվանումը և գումարը:
3.13 Սփոթ գործարքների էական պայմանները
- Հաճախորդի կողմից գնվող/վաճառվող արժույթի անվանումը և գումարը,
- Հաճախորդի կողմից վաճառվող/գնվող արժույթի անվանումը
- Արժույթի սփոթ փոխարժեք,
- Փոխարկման ամսաթիվ:

## ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Գործարքի պայմանները որոշելու համար Կողմերը բանակցում են հեռախոսով կամ օգտագործելով Կողմերի միջև համաձայնեցված հաղորդակցության այլ էլեկտրոնային միջոցներ: Բանակցությունների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվում Գործարքի էական պայմանների վերաբերյալ, որոնք նշված են սույն Պայմանագրի 3-րդ բաժնում և վերաբերում են գործարքի տվյալ տեսակին:

4.2. Բանակցությունների ընթացքում գործարքի բոլոր էական պայմանների շուրջ պայմանավորվածություն ձեռքբերվելու դեպքում Կողմերը ձեռնարկում են համապատասխան միջոցներ գործարքի կնքման ուղղությամբ:
4.2.1. Գործարքը կնքվում է հետևյալ կարգով. Ընկերությունը, սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված ձևաչափին համապատասխան, էլեկտրոնային հաղորդագրությամբ Հաճախորդի հաստատմանն է ներկայացնում գործարքի էական պայմանները.
4.2.2. Հաճախորդը, ստանալով Պայմանագրի 4.3.1. ենթակետով նախատեսված հաղորդագրությունը, պարտավոր է, հաղորդագրությունը ստանալու պահից, 30 (երեսուն) րոպեի ընթացքում էլեկտրոնային հաղորդագրությամբ. (ա) հաստատել գործարքը, (բ) մերժել գործարքի հաստատումը (կիրառելիության դեպքում ներկայացնելով գործարքի պայմանների վերաբերյալ իր առարկությունները):
4.3. Եթե Հաճախորդը, Պայմանագրի 4.2.2 ենթակետով նախատեսված ժամկետում պատասխան չի ներկայացնում, ապա գործարքը համարվում է Հաճախորդի կողմից հաստատված՝ 4.2.1 ենթակետին համապատասխան ներկայացված պայմաններին համապատասխան: Կողմերի միջև սույն բաժնով նախատեսված հաղորդակցությունն իրականացվում է սույն Պայմանագրի 12-րդ բաժնում սահմանված էլեկտրոնային փոստի հասցեներով նամակագրության միջոցով:
4.4. Կողմերն ընդունում են, սույն Պայմանագրի 12-րդ բաժնում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով փոխանցված փաստաթղթերը և հաղորդագրությունները ունեն իրավական ուժ:

## ՓՈԽՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Հաճախորդն իրականացնում է արտարժույթի առքի կամ վաճառքի «սփոթ» գործարքների գծով վճարումներ՝ հաստատման մեջ (Հավելված 1) նշված չափով և ժամկետում համապատասխան դրամական միջոցները Ընկերության բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
5.2. Ընկերությունը իրականացնում է արտարժույթի առքի կամ վաճառքի «սփոթ» գործարքների գծով վճարումներ՝ հաստատման մեջ (սույն Պայմանագրի Հավելված 1) նշված չափով և ժամկետում դրամական միջոցները Հաճախորդի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

## ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Ցանկացած հաղորդագրություն, հարցում, ծանուցում, տեղեկացում կամ պահանջ համարվում է պատշաճ կերպով փոխանցված հասցեատիրոջ կողմից այն ստանալու պահից: Մի կողմից մյուս կողմին ուղարկված հաղորդագրության ստացման պահ է համարվում էլեկտրոնային փոստի Ընկերության կամ Հաճախորդի փոստարկղում տվյալ հաղորդագրության ստացման օրը և ժամը:

6.2. Կողմերի էլեկտրոնային փոստի հասցեները, որոնք ավտոմատ կերպով արտաբերվում են էկրանի վրա և համակարգի կողմից մուտքագրվում են հաղորդագրությունների ցանկ, անհրաժեշտ և բավարար պայման են հաստատելու համար, որ փաստաթուղթը ստացվել է սույն Պայմանագրի կողմ հանդիսացող անձի կողմից:

## ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությանը և սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան:
7.2 Արժույթի փոխարկման ամսաթվի պայմանի խախտման դեպքում խախտումը թույլ չտված Կողմն իրավունք ունի տվյալ խախտումը թույլ տված Կողմից գանձել տույժ յուրաքանչյուր կետանցված օրվա համար՝ ժամկետանց պարտավորությունների 0,13% չափով՝ ՀՀ դրամով (հաշվարկված ՀՀ Կենտրոնական բանկի կողմից գործարքի պայմաններով սահմանված վճարման ժամկետի դրությամբ սահմանված փոխարժեքով, եթե վճարումը կատարվում է ՀՀ դրամից տարբերվող արժույթով):

7.3 Այն դեպքում, երբ Կողմերից մեկի հաշվին մուտքագրված գումարը անբավարար է սույն Պայմանագրով կնքված գործարքի դիմաց մյուս Կողմի բոլոր պարտավորությունները մարելու համար, սահմանվում է պարտավորությունների մարման հետևյալ հաջորդականությունը.
1) տույժի գումարը,
2) հիմնական պարտքի գումարը:

7.4 Տույժի վճարումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմանագրի համապատասխան դրույթներով:
7.5 Սույն Պայմանագրով սահմանված տուժանքի առավելագույն չափը տարեկան կտրվածքով չի կարող գերազանցել տուժանքով ապահովված պարտավորության 15%-ը, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Սույն Պայմանագրով սահմանված տուժանքի ընդհանուր գումարը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող ընդհանուր պարտքի գումարը:

## ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

8.1. Կողմերն ազատվում են պատասխանատվությունից սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները չկատարելու համար, եթե դա պայմանավորված է հետևյալով.
8.1.1. Անհաղթահարելի ուժի ազդեցությամբ՝ պայմանավորված արտակարգ և անկանխատեսելի հանգամանքներով, այդ թվում՝ բնական աղետների, ռազմական, ահաբեկչական ակտերի, շրջափակումների և գործադուլների դեպքում:

8.1.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ Կառավարության կողմից պարտավորությունների կատարման հետաձգումով՝ այն իրավունքների և պարտավորությունների գծով, որոնք նախատեսված են սույն Պայմանագրով:
8.1.3. ՀՀ Կենտրոնական բանկի, պետական մարմինների որոշումներով, որոնք Կողմերից որևէ մեկի համար անհնարին են դարձնում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:
8.2. 8.1 կետում նշված հանգամանքների առաջացման և տևողության հիմնավորում են համարվում իրավասու մարմինների կողմից տրված պաշտոնական հաստատումները:
8.3. Կողմերը պարտավոր են գրավոր տեղեկացնել միմյանց ֆորս-մաժորային հանգամանքների առաջացման և դադարեցման մասին՝ դրանց առաջացման/դադարեցման պահից ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման վերջնաժամկետը հետաձգվում է նշված ժամանակահատվածին համամասնորեն:
8.4. 8.1 կետում նշված հանգամանքների ավարտից հետո Կողմերը պարտավոր են շարունակել կատարել սույն Պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունները, եթե այլ բան նախատեսված չէ Կողմերի կողմից կնքված լրացուցիչ համաձայնագրով:

8.5. Եթե 8.1 կետով նախատեսված հանգամանքները տևում են ավելի քան 6 (վեց) ամիս, Կողմերը պարտավոր են համաձայնեցնել իրենց պարտավորությունների դադարեցման հնարավոր ընթացակարգը:

## ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Կողմերի միջև ծագած բոլոր վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհամաձայնության դեպքում դրանք ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1 Սույն Պայմանագրում կատարվող փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում միայն այն դեպքում, եթե դրանք կազմված են գրավոր և ստորագրվել են Կողմերի լիազորված անձանց կողմից:

## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումը:
11.2 Սույն Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր ձևով և ստորագրված Կողմերի լիազորված անձանց կողմից: Պայմանագրի դադարեցումը չի ազատում Կողմերին մինչ այդ ստանձնած պարտավորությունների կատարումից:
11.3 Սույն Պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած կողմի նախաձեռնությամբ՝ գրավոր ծանուցման հիման վրա, որը ստորագրվում է լիազորված անձի կողմից և ուղարկվում պայմանագրի լուծման ենթադրվող ամսաթվից առնվազն տասը աշխատանքային օր առաջ: Պայմանագրի դադարեցումը չի ազատում Կողմերին մինչ այդ ստանձնած պարտավորությունների կատարումից:
11.4 Կողմերը (նրանց անունից սույն Պայմանագիրը ստորագրող անձինք) հայտարարում են, որ՝
ա/ իրավասու են կնքել և իրականացնել սույն Պայմանագիրն առանց օրենքի կամ պայմանագրային սահմանափակումների կամ այլ անձանց իրավունքների կամ օրինական շահերի խախտման.
բ/ ամբողջովին գիտակցում են և հասկանում սույն Պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստն ու նշանակությունը, և այն արտահայտում է իրենց իրական կամքը.
գ/ սույն Պայմանագիրն ուժի մեջ է և իրավաբանորեն պարտավորեցնում է իրենց ու պարտադիր է իրենց համար.
դ/ գործարքի իրականացման համար առկա են բոլոր իրավասու մարմինների օրենսդրությամբ պահանջվող թույլտվությունները, համաձայնությունները և որոշումները:

11.5 Կողմերը պարտավորվում են եռօրյա ժամկետում գրավոր ձևով միմյանց տեղեկացնել իրավաբանական կամ փոստային հասցեի, վճարային ռեկվիզիտների և այլ փոփոխությունների մասին, որոնք ապահովում են Պայմանագրով սահմանված դրույթների կատարումը: Փոփոխությունների մասին մյուս Կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող Կողմը:
11.6 Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 12 ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| **ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** | **ՀԱՃԱԽՈՐԴ** |
| «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ | «*************» *** |
| ՀՎՀՀ՝ 02657619 | ՀՎՀՀ՝ ******** |
| Հասցե՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 1 | Հասցե՝ ******************* |
| | Բանկային հաշիվներ՝ |
| | ՀՀ դրամ ******** |
| | ԱՄՆ դոլար ******** |
| | ՌԴ ռուբլի ******** |
| | Եվրո ******** |
| ՀՀ ԿԲ լիցենզիա՝ թիվ 0013 | |
| Էլ. Հասցե՝ currency@cubeinvest.am | Էլ. Հասցե՝ *************** |
| Գլխավոր տնօրեն՝ ************ | Տնօրեն՝ ************ |

Հավելված 1

Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների իրականացման պայմանագրի
**Ընկերության և Հաճախորդի միջև «Սփոթ» գործարքի հաստատման ձև**

**ՀԱՍՏԱՏՈՒՄ**

«Կուբ Ինվեսթ» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն՝ ************
Հեռախոսահամար՝ +374 11 800 810
Էլ. փոստ՝ currency@cubeinvest.am

Համաձայն *********** պայմանագրի, սույնով հաստատում ենք արտարժույթի առք ու վաճառքի (սփոթ) գործարքի կնքումը հետևյալ պայմաններով.

| | | |
|---|---|---|
| Հաճախորդ | «********» *** | |
| Հաճախորդի ՀՎՀՀ | ********* | |
| Հաճախորդի կողմից գործարքի կատարման ամսաթիվը | **.**.20**թ. | |
| Ընկերության կողմից գործարքի կատարման ամսաթիվը | **.**.20**թ. | |
| Գործարքի տեսակ | Արտարժույթի առք ու վաճառք (սփոթ) | |
| Հաճախորդի կողմից վաճառվող արժույթը | ********* | |
| Հաճախորդի կողմից ձեռքբերվող արժույթը և հաշվեհամարը | ******* | *********** |
| Հաճախորդի կողմից ձեռք բերվող արժույթը և գումարը | ********** | |
| Հաճախորդի կողմից վաճառվող արժույթը և գումարը | ********** | |
| Գործարքի փոխարժեք | ************* | |
| Ընկերության կողմից վաճառվող արժույթը | ******** | |
| Ընկերության կողմից ձեռքբերվող արժույթը և հաշվեհամարը | ********* | ********** |
| Օֆերտայի ամսաթիվը | **.**.20**թ. | |

| | |
|---|---|
| **ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ** | **ՀԱՃԱԽՈՐԴ** |
| «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ | «************» *** |
| Գլխավոր տնօրեն՝ ************ | Տնօրեն՝ ************* |

Ծառայությունների իրականացման սակագներ

1. Ռեզիդենտ հաճախորդներին ներդրումային ծառայությունների մատուցման սակագներ

Բրոքերային հաշիվ

| | |
|---|---|
| Հաշվի բացում, սպասարկում, փակում | անվճար |
| Ակտիվների նվազագույն գումար | 0 |
| Միջոցների մուտք հաշվին | անվճար |
| Միջոցների ելք հաշվից՝<br>1. ՀՀ բանկեր<br>2. Օտարերկրյա բանկեր | <br>անվճար<br>0,2%, նվազագույնը՝ 20000 AMD, առավելագույնը՝ 120000 AMD |

Բրոքերային գործառնություններ արժեթղթերով[1]

| | |
|---|---|
| Արժեթղթերի առք և վաճառք (պարտատոմսեր, բաժնետոմսեր, Ֆոնդերի փայեր, նոտաներ, դեպոզիտար ստացականներ)՝<br>1. Հայկական եվրապարտատոմսեր, օտարերկրյա իրացվելի արժեթղթեր՝ բացառությամբ ռուսական արժեթղթերի | գործարքի գումարի 0.15%, նվազ. 90 000 AMD |
| 2. ՀՀ-ում թողարկված արժեթղթեր (ներառյալ AMX-ում (Հայաստանի ֆոնդային բորսա) ցուցակված արժեթղթերի)[2]՝ | |
| - պարտքային արժեթղթեր (բացառությամբ հայկական եվրապարտատոմսեր) | գործարքի գումարի 0.15%, նվազ. 90 000 AMD |
| - ֆոնդերի փայեր | անվճար |
| - այլ արժեթղթեր | գործարքի գումարի 0.20%, նվազ. 90 000 AMD |
| 4. Ռուսական արժեթղթեր | գործարքի գումարի 0.40%, նվազ. 90 000 AMD |

Բրոքերային գործառնություններ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով[3]

| | |
|---|---|
| Ածանցյալ գործիքների առք և վաճառք՝<br>1. Արտաբորսայական շուկա<br>2. Բորսայական շուկա | <br>գործարքի գումարի 0.10%, նվազ. 10 000 AMD<br>գործարքի գումարի 0.10%, նվազ. 10 000 AMD |
| Ածանցյալ գործիքների մարում (էքսպիրացիա) | անվճար |

Հավատարմագրային կառավարում

| | |
|---|---|
| Ակտիվների մուտք և ելք | պայմանագրային |
| Կատարողականի պարգևավճար | պայմանագրային |
| Կառավարման վճար | պայմանագրային |

Արժեթղթերի առաջնային տեղաբաշխում

| Առաջնային տեղաբաշխման կազմակերպում | պայմանագրային |
|---|---|
| Արժեթղթերի ձեռքբերում՝ առաջնային տեղաբաշխման շրջանակում ՝<br>1. Բրոքերի կողմից կազմակերպված | անվճար |
| 2. Երրորդ անձանց կողմից կազմակերպված (երբ Բրոքերը ինքնուրույն միանում է երրորդ անձանց արժեթղթերի առաջնային տեղաբաշխմանը՝ վերավաճառելով տեղաբաշխողից գնված արժեթղթերը): | անվճար |

Պահառուական ծառայություններ[1]

| Հաշվի բացում, սպասարկում, փակում | անվճար |
|---|---|
| Արժեթղթերի մուտք հաշվին՝ հաճախորդի հանձնարարությամբ | անվճար |
| Արժեթղթերի ելք հաշվից՝ հաճախորդի հանձնարարությամբ[4] | շուկայական գնի 0.20%[7], նվազ. 100 000 AMD |
| Արժեթղթերի պահառություն[5]՝ | |
| 1. ՀՀ-ում թողարկված արժեթղթեր | տարեկան 0.015% |
| 2. Հայկական եվրապարտատոմսեր | տարեկան 0.015% |
| 3. Օտարերկրյա իրացվելի արժեթղթեր (բացառությամբ ռուսական կամ առանձնացված հաշվառման ենթակա արժեթղթերի6) | տարեկան 0.10% |
| 4. Ռուսական արժեթղթեր | տարեկան 0.40% |
| 5. Առանձնացված հաշվառման ենթակա արժեթղթեր[6] | տարեկան 0.40% |

[1] - Սույն սակագնից բացի, առկայության դեպքում, հատուցման են ենթակա հետևյալ ծախսերը՝ Բրոքերի ծախսերը կապված ատեստացիայի հետ (SWIFT հաղորդագրություններ), ինչպես նաև դրոշմակնիքային վճարը:

2 - Բացի առաջնային տեղաբաշխման գործարքներից:

3 - Սույն սակագնից բացի, առկայության դեպքում, հատուցման են ենթակա նաև գործարքի գործակալների և առևտրի կազմակերպիչների գանձումները:

4 - Առուվաճառքի պայմանագրերով գործարքների դեպքում, երբ Բրոքերը հանդես է գալիս որպես կողմ, ծառայության վճար չի գանձվում:

5 - ՌԵՊՈ գործառնություններում ներգրավված արժեթղթերի համար պահառության վճար չի գանձվում:

6 - Միջազգային պատժամիջոցների տեսանկյունից բարձր ռիսկային համարվող երկրներում գրանցված կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր:

7 - Եթե Բրոքերին հայտնի է տվյալ արժեթղթի շուկայական գինը, իսկ դրանց բացակայության պարագայում՝ անվանական արժեքից:

2. Ոչ ռեզիդենտ հաճախորդներին ներդրումային ծառայությունների մատուցման սակագներ

Բրոքերային հաշիվ

| | |
|---|---|
| Հաշվի բացում, սպասարկում, փակում | անվճար |
| Ակտիվների նվազագույն գումար | 0 |
| Միջոցների մուտք հաշվին | անվճար |
| Միջոցների ելք հաշվից՝<br>1. ՀՀ բանկեր<br>2. Օտարերկրյա բանկեր | <br>անվճար<br>0,2%, նվազագույնը՝ 20000 AMD, առավելագույնը՝ 120000 AMD |

Բրոքերային գործառնություններ արժեթղթերով[1]

| | |
|---|---|
| Արժեթղթերի առք և վաճառք (պարտատոմսեր, բաժնետոմսեր, Ֆոնդերի փայեր, նոտաներ, դեպոզիտար ստացականներ)՝ | |
| 1. Հայկական եվրապարտատոմսեր, օտարերկրյա իրացվելի արժեթղթեր՝ բացառությամբ ռուսական արժեթղթերի | գործարքի գումարի 0.15%, նվազ. 90 000 AMD |
| 2. ՀՀ-ում թողարկված արժեթղթեր (ներառյալ AMX-ում (Հայաստանի ֆոնդային բորսա) ցուցակված արժեթղթերի)[2]՝ | |
| - պարտքային արժեթղթեր (բացառությամբ հայկական եվրապարտատոմսեր) | գործարքի գումարի 0.15%, նվազ. 90 000 AMD |
| - ֆոնդերի փայեր | անվճար |
| - այլ արժեթղթեր | գործարքի գումարի 0.20%, նվազ. 90 000 AMD |
| 4. Ռուսական արժեթղթեր | գործարքի գումարի 0.40%, նվազ. 90 000 AMD |

Բրոքերային գործառնություններ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներով[3]

| | |
|---|---|
| Ածանցյալ գործիքների առք և վաճառք՝<br>1. Արտաբորսայական շուկա<br>2. Բորսայական շուկա | <br>գործարքի գումարի 0.10%, նվազ. 10 000 AMD<br>գործարքի գումարի 0.10%, նվազ. 10 000 AMD |
| Ածանցյալ գործիքների մարում (էքսպիրացիա) | անվճար |

Հավատարմագրային կառավարում

| | |
|---|---|
| Ակտիվների մուտք և ելք | պայմանագրային |
| Կատարողականի պարգևավճար | պայմանագրային |
| Կառավարման վճար | պայմանագրային |

Արժեթղթերի առաջնային տեղաբաշխում

| | |
|---|---|
| Առաջնային տեղաբաշխման կազմակերպում | պայմանագրային պայմաններ |
| Արժեթղթերի ձեռքբերում՝ առաջնային տեղաբաշխման շրջանակում ՝ | |
| 1. Բրոքերի կողմից կազմակերպված | անվճար |
| 2. Երրորդ անձանց կողմից կազմակերպված (երբ Բրոքերը ինքնուրույն միանում է երրորդ անձանց արժեթղթերի առաջնային տեղաբաշխմանը՝ վերավաճառելով տեղաբաշխողից գնված արժեթղթերը): | անվճար |

Պահառուական ծառայություններ[1]

| | |
|---|---|
| Հաշվի բացում, սպասարկում, փակում | անվճար |
| Արժեթղթերի մուտք հաշվին՝ հաճախորդի հանձնարարությամբ | անվճար |
| Արժեթղթերի ելք հաշվից՝ հաճախորդի հանձնարարությամբ[4] | շուկայական գնի 0.20%[7], նվազ. 100 000 AMD |
| Արժեթղթերի պահառություն[5]՝ | |
| 1. ՀՀ-ում թողարկված արժեթղթեր | տարեկան 0.05% |
| 2. Հայկական եվրապարտատոմսեր | տարեկան 0.05% |
| 3. Օտարերկրյա իրացվելի արժեթղթեր (բացառությամբ ռուսական կամ առանձնացված հաշվառման ենթակա | տարեկան 0.15% |

| | |
|---|---|
| արժեթղթերի6) | |
| 4. Ռուսական արժեթղթեր | տարեկան 0.40% |
| 5. Առանձնացված հաշվառման ենթակա արժեթղթեր[6] | տարեկան 0.40% |

1 - Սույն սակագնից բացի, առկայության դեպքում, հատուցման են ենթակա հետևյալ ծախսերը՝ Բրոքերի ծախսերը կապված ատեստացիայի հետ (SWIFT հաղորդագրություններ), ինչպես նաև դրոշմակնիքային վճարը:

2 - Բացի առաջնային տեղաբաշխման գործարքներից:

3 - Սույն սակագնից բացի, առկայության դեպքում, հատուցման են ենթակա նաև գործարքի գործակալների և առևտրի կազմակերպիչների գանձումները:

4 - Առուվաճառքի պայմանագրերով գործարքների դեպքում, երբ Բրոքերը հանդես է գալիս որպես կողմ, ծառայության վճար չի գանձվում:

5 - ՌԵՊՈ գործառնություններում ներգրավված արժեթղթերի համար պահառության վճար չի գանձվում:

6 - Միջազգային պատժամիջոցների տեսանկյունից բարձր ռիսկային համարվող երկրներում գրանցված կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթեր:

7 - Եթե Բրոքերին հայտնի է տվյալ արժեթղթի շուկայական գինը, իսկ դրանց բացակայության պարագայում՝ անվանական արժեքից:

## 3. CubeBroker PRO առևտրային հարթակի միջոցով ծառայությունների մատուցման սակագներ

### Բրոքերային հաշիվ

| | |
|---|---|
| Հաշվի բացում, սպասարկում | անվճար |
| Ակտիվների նվազագույն գումար | 0 |
| Միջոցների մուտք հաշվին | անվճար |
| Միջոցների ելք հաշվից | |
| 1. ՀՀ բանկեր | անվճար |
| 2. Օտարերկրյա բանկեր | 0,2%, նվազագույնը՝ 20000 AMD, առավելագույնը՝ 120000 AMD |

### Էլեկտրոնային առևտրային հարթակով բրոքերային ծառայություններ[21]

| |
|---|
| Բաժնետոմսերի, ֆոնդերի փայերի առքուվաճառք |

[21] Բրոքերի կողմից կարող են գանձվել պահառուական, իրավական,բորսայական և գործարքի կատարման ապահովման համար այլ ծախսեր

| | |
|---|---|
| 1. ԱՄՆ<br>2. Կանադա<br>3. Եվրոպա<br>4. Մեծ Բրիտանիա<br>5. Չինաստան<br>6. Սինգապուր<br>7. Դուբայ<br>8. ԱՄԷ<br>9. Աբու Դաբի | 0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 1.5 ԱՄՆ Դոլար<br>0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝6 Կանադական Դոլար<br>0.2% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 6 Եվրո<br>0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 5 Ֆունտ<br>0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 60 Յուան/70ՀԿԴ<br>0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 20 ՍԳԴ<br>0.25% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 10.5 Դիրհամ<br>0.15% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 5 Դիրհամ |
| Օպցիոններ | |
| ԱՄՆ | 2 ԱՄՆ Դոլար յուրաքանչյուր պայմանագրի համար<br>3 ԱՄՆ Դոլար յուրաքանչյուր գործարքի համար |
| Պարտատոմսեր | |
| 1. ԱՄՆ և այլ երկրների պետական և կորպորատիվ պարտատոմսեր<br>2. ՀՀ | 0.2% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 50 ԱՄՆ Դոլար<br>0.1% գործարքի ծավալից, նվազագույնը՝ 10,000 ՀՀԴ |

Անհատական մենեջերի աջակցություն

| | |
|---|---|
| Բաժնային շուկայում գործարքների իրականացում | 0.4% գործարքի ծավալից |
| Այլ գործարքներ | Պայմանագրային |

Ներդրումային գործարքներն իրականացվում են հետևյալ հիմնական և ածանցյալ ֆինանսական գործիքներով՝ բաժնետոմս, պարտատոմս, ֆյուչերս, օպցիոն, CFD (Contract for difference), այլ գործիքներ:

*Ռիսկերը ըստ ֆինանսական գործիքների տեսակների.*

– *բաժնետոմս - ընկերությունների բաժնետոմսերի հետ սովորական առուվաճառքի գործառնությունները համարվում են սահմանափակ ռիսկով գործառնություններ, այսինքն՝ հաճախորդի կորուստներ կրելու ռիսկը սահմանափակվում է նրա կողմից բաժնետոմսերով գործառնությունների կատարելու համար ծախսված գումարներով: Սակայն հարկ է հաշվի առնել, որ որոշակի հանգամանքներում կորուստները կարող են առաջանալ համեմատաբար կարճ ժամանակամիջոցում: Մասնավորապես, բաժնետոմսերի շուկայում առկա են ֆինանսական ռիսկեր, որոնք իրենցից ներկայացնում են ֆինանսական գործառնությունների ընթացքում առաջացող՝ շուկայական անբարենպաստ գործոններով պայմանավորված իրական վնասի ռիսկեր: Ֆինանսական ռիսկերը հետևյալն են. արժութային ռիսկ, իրացվելիության ռիսկ, գնային ռիսկ, թողարկողի անվճարունակության ռիսկ:*

– *ֆյուչերս - ֆյուչերսներում ներդրումներ կատարելու դեպքում առկա է կարճ ժամանակահատվածում մեծ գումարներ կորցնելու ռիսկ, ընդ որում հնարավոր կորուստների չափը անսահմանափակ է. կորուստները կարող են անգամ գերազանցել Ընկերության մոտ բացված հաշվին սկզբնապես մուտքագրված գումարը: Պատճառն այն է, որ ֆյուչերսների առքուվաճառքը ենթադրում է մեծ արժեք ունեցող ակտիվների գծով դիրք բացելու հնարավորություն համեմատաբար փոքր գումարներով, ինչը ստեղծում է թե նվազ միջոցներով առավել մեծ գումարներ շահելու հնարավորություն, և թե ներդրմանն անհամեմատ մեծ գումարներ կորցնելու ռիսկ: Եթե դուք վստահ չեք, որ հնարավոր կլինի արդյոք կառավարել նշված բոլոր ռիսկերը, գերադասելի է ձեռնպահ մնալ արժեթղթերի ֆյուչերսների առքուվաճառքից:*

– *օպցիոն - օպցիոնները նույնպես դասվում են ռիսկային ֆինանսական գործիքների շարքին, որոնցում ներդրումները և որոնցով գործառնությունները նույնպես ռիսկային են: Օպցիոնների առքուվաճառքին հատուկ ռիսկերը նույնպես ենթադրում են կարճ ժամանակամիջոցում մեծ կորուստներ կրելու հնարավորություն: Օպցիոն պայմանագիր ձեռքբերած անձը շատ կարճ ժամանակահատվածում կարող է կորցնել գնված առքի/վաճառքի օպցիոնի դիմաց վճարված ողջ գումարը կամ անսահմանափակ չափով կորուստներ կրել օպցիոնի կարճ վաճառքի հետևանքով: Այս ռիսկը պայմանավորված է օպցիոնի բնույթով, այն է՝ օպցիոնը հանդիսանում է արժեզրկվող ակտիվ, որն ունի գործողության սահմանափակ ժամկետ և այդ ժամկետը լրանալուց հետո կարող է ամբողջությամբ կորցնել իր արժեքը:*

– *CFD (Contract For Difference) – CFD-երը նույնպես դասվում են ռիսկային ֆինանսական գործիքների շարքին, որոնցում ներդրումները և որոնցով գործառնությունները նույնպես ռիսկային են: CFD-երի առքուվաճառքին հատուկ ռիսկերը նույնպես ենթադրում են կարճ ժամանակամիջոցում մեծ կորուստներ կրելու հնարավորություն: CFD պայմանագիր ձեռքբերած անձը շատ կարճ ժամանակահատվածում կարող է կորցնել գնված CFD-ի դիմաց ներդրված ողջ գումարը: Այս ռիսկը պայմանավորված է CFD ֆինանսական գործիքի բնույթով:*

– *պարտատոմս - թեև պարտատոմսերը դասվում են զգալիորեն ցածր ռիսկայնություն ունեցող գործիքների*

*շարքին, սակայն ֆինանսական շուկայի բոլոր գործիքների նման այն նույնպես պարունակում է իրեն բնորոշ հիմնական ռիսկեր, որոնք են՝ շուկայական ռիսկ, թողարկողի անվճարունակության ռիսկ, իրացվելիության ռիսկ և այլ ռիսկեր:*

*Բրոքերային և պահառության ծառայությունների հնարավոր ռիսկերի համառոտ նկարագրին, ինչպես նաև հաճախորդներին գործարքների մատուցման իրականացման ընթացակարգերին կարող եք ծանոթանալ «Բրոքերային և պահառության ծառայությունների մատուցման կարգ և պայմաններ»-ում, որը առկա է «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ www.cubeinvest.am ինտերնետային կայքում:*

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ-ն ապահովում է շահերի բախման հետ կապված գործողությունները, հաճախորդից գործարքների իրականացման պատվերների ընդունման և կատարման գործընթացը, համաձայն «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ «Գործարքների արդյունքում շահերի հնարավոր բախման բացառմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացման կարգ»-ով, որը առկա է «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ www.cubeinvest.am ինտերնետային կայքում:

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ բոլոր գործարքները իրականացվում եմ բացառապես «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ գրասենյակում:

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ գործարքները իրականացվում եմ համաձայն ներքին իրավական ակտերի, որոք տեղադրված են www.cubeinvest.am ինտերնետային կայքում:

«ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ իր գործառնություններն իրականացնում է բացառապես անկանխիկ եղանակով, որն ամրագրված է «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կանոնադրության 3.5. կետով:

***Ուշադրություն՝***

***Արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, բացառությամբ ՀՀ ռեզիդենտ բանկերի կողմից թողարկված պարտատոմսերում կատարվող ներդրումների:***

***Դիմում - պայմանագրում նշված պայմաններին համապատասխան գործարքների կատարման դեպքում արժեթղթերում ներդրման հետ կապված ռիսկը կրում է Հաճախորդը:***

*ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ «ԿՈՒԲ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ*